

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած
Ժամանակաշրջանի վերաբերյալ


ԵՐԵՎԱՆ
Փետրվար 2017

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	3-5
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ	
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն	6
Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն	7
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8-14
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԾԻԳ ՊՀ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ	15



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

“Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության Ծրագրի”

2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ


Ներկայացվում է Գյուղատնտեսական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ Պետական Հիմնարկի (ԳՕԻԳ ՊՀ) ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող և ԳՕԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվող “Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության Ծրագրի” (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն “Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային սկզբունքով” Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային սկզբունք):
2. Տոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2013թ. ապրիլի 18-ին կնքված ԳԷՀ No. TF013724 Նամակ-համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն 2013թ. ապրիլի 18-ին կնքված ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհի:
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն 2013թ. ապրիլի 18-ին կնքված ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում: Մենք անկախ ենք Ընկերությունից համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների լուսարանում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 9-ին, որը բացահայտում է, որ ծրագիրը ավարտվել է հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ:


Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ԳՕԻԳ ՊՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄ) կողմից հրապարակված „ՀՀՀՀՄՄ-դրամային սկզբունք», ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD


ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածաստություն:


Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, դեկլարությունը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությունը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

“ՍՕՍ-Աուդիտ” ՍՊԸ
3 փետրվարի, 2017թ.





Նազիկ Չիթյան
Աուդիտոր


ՀԱՍՏԱՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ թղթեր)

	Փաստացի	Նախատված		Շեղում		ԾԳՓ
		Հաշվետու ժամանակա- շրջան	Անորակա առ 13.01.2017թ.	Հաշվետու ժամանակա- շրջան	Անորակա առ 13.01.2017թ.	
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	191,164.96	-	-	-	-	
Ֆոնդերի աղբյուրներ						
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724	139,293.59	829,358.07				900,000.00
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	6,694.28	142,676.12				180,000.00
Ընդամենը	145,987.87	972,034.19				1,080,000.00
Արտարժույթային օգուտ/(վարստ)	(446.98)	(3,861.31)				
Ֆոնդերի օգտագործում						
7						
1. Խորհրդարանական ծառայություններ և վերապատրաստում	108,350.11	500,493.01	122,937.00	515,079.90	(14,586.89)	582,000.00
2. Համայնքային ղրամաշնորհներ I(բ) մասի ներքո	228,355.74	467,679.87	168,795.00	408,119.13	59,560.74	498,000.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	336,705.85	968,172.88	291,732.00	923,199.03	44,973.85	1,080,000.00
Դրամական միջոցների վերջնական մնացորդ						
6						
Նպատակային հաշիվ (ԳԷՀ Դրամաշնորհ)	-	-				
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	-	-				
Ընդամենը	-	-				


Գերլամ Գ. Վարդյան
Տնօրենի պաշտոնակատար

3 փետրվարի, 2016


Արմինե Հնիքոյան
Ֆինանսական ղեկավար

Ծանոթագրություններ 8-14 էջերը կազմում են այս հաշույն մատակարարողների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԻՋՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724**

Ըստ բաղադրիչների ֆունդի օգտագործման մասին հաշվետվություն
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(*ԱՄՆ դոլար*)

Բաղադրիչ	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու ժամանակաշրջան	Անդրական առ 13.01.2017թ.	Հաշվետու ժամանակաշրջան	Անդրական առ 13.01.2017թ.	Հաշվետու ժամանակաշրջան	Անդրական առ 13.01.2017թ.	
Մաս 1. Արտավայրերի/գյուղատնտեսական կենդանիների կառավարման համակարգ	336,705.85	900,465.84	215,078.00	778,837.99	121,627.85	121,627.85	1,008,000.00
1 (ա). Արտավայրերի/գյուղատնտեսական կենդանիների կառավարման պլանների մշակում	108,350.11	432,785.97	46,283.00	370,718.86	62,067.11	62,067.11	426,000
1 (բ). Համայնքային դրամաշնորհներ	228,355.74	467,679.87	168,795.00	408,119.13	59,560.74	59,560.74	582,000
Մաս 2. Օժանդակ ծառայությունների ուժեղացում	-	56,110.85	-	56,110.85	-	-	60,000.00
Մաս 3. Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում	-	11,596.19	76,654.00	88,250.19	(76,654.00)	(76,654.00)	12,000.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	336,705.85	968,172.88	291,732.00	923,199.03	44,973.85	44,973.85	1,080,000.00

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2013թ. ապրիլի 18-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) միջև ստորագրվել է No. TF013724 Նամակ-համաձայնագիրը, համաձայն որի ՎՋՄԲ-ն, հանդես գալով որպես Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցների կառավարիչ, տրամադրել է 900,000 ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող դրամաշնորհ:

Դրամաշնորհը տրամադրվել է Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանը օժանդակելու նպատակով:

ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհի կողմից ֆինանսավորման վերջնաժամկետ է սահմանվել 2016թ. դեկտեմբերի 11-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է բարելավել ագրոհամակարգի ծառայությունների մատուցման գործընթացը, որը թույլ կտա պահպանել համայնքների բնակչության կենսամակարդակը, ինչպես նաև պաշտպանել բնական ռեսուրսները գյուղատնտեսության ոլորտի մրցակցային հողագործության հետևանքով առաջացող ճնշումից:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս 1. Արտավայրերի/գյուղատնտեսական կենդանիների կառավարման համակարգ.

- (ա) Արտավայրերի/գյուղատնտեսական կենդանիների կառավարման ծրագրի զարգացման նպատակով տեխնիկական օժանդակության տրամադրում և վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- (բ) Արտավայրերի/գյուղատնտեսական կենդանիների կառավարման ծրագրի զարգացման նպատակով շահառուներին համայնքային դրամաշնորհների հատկացում:

Մաս 2. Օժանդակ ծառայությունների ուժեղացում.

- (ա) Խորհրդատվական և կրթական ծառայությունների մատուցման համար ԳԱՄԿ-ների կարողությունների ուժեղացման նպատակով տեխնիկական օժանդակության տրամադրում և վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- (բ) Հողի արդյունավետ կառավարման մասին հանրությանը իրազեկելու նպատակով տեխնիկական օժանդակության տրամադրում և վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Մաս 3. Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում:

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ - ծախսերի ֆինանսավորում 100%՝ բացառությամբ հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկերի ֆինանսավորում:

ՀԱՍՏԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՄՈՒՐՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

Կատեգորիա	ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	485,000.00	97,000.00	582,000.00
2. Համայնքային դրամաշնորհներ 1(ք) մասի ներքո	415,000.00	83,000.00	498,000.00
Ընդամենը	900,000.00	180,000.00	1,080,000.00

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ԳԾԻԳ) կողմից, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման համաձայն:

ԳԾԻԳ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոմիտասի պ. 54Բ/15:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Չեռնարկին՝ «RM3- Ֆինանսական Հաշվետվողականություն և Առողիտ» (մարտ, 2010) համապատասխան:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանած փոխարժեքով:

Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ:

2017թ. հունվարի 13-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 485.68 դրամ:

2.4 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5 Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ թարմացված գնումների սյանի:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE & SUMMARY SHEET)

Դիմումի համարը	Դիմումի հաստատման ամսաթիվը	Ծախսային հոդված		Ընդամենը
		1. Խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	2. Համայնքային դրամաշնորհներ 1(բ) մասի ներքո	
		ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	
7	01.02.2016	48,312.15	-	48,312.15
8	08.06.2016	-	87,571.43	87,571.43
9	15.09.2016	79,038.13	62,353.16	141,391.29
10	23.12.2016	-	28,430.97	28,430.97
11	13.01.2017	-	13,587.75	13,587.75
Ընդամենը		127,350.28	191,943.31	319,293.59

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000929027
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Տիգրան Մեծ 4, 1-ին հարկ, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն,
Արժույթը	ԱՄՆ դոլար

	ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ 2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջան
1. Սկզբնական մնացորդ 01.01.2016 դրությամբ	155,582.33
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՎՋՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում	139,883.58
4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՎՋՄԲ -ին	(589.99)
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	294,875.92
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդ 13.01.2017 դրությամբ	-
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	294,875.92
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	294,875.92
10. Տարբերություն (5)-(9)	-

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		13.01.2017 ԱՄՆ դոլար	01.01.2016 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	-	191,164.96
Կանխավճարներ		-	-
Ընդամենը ակտիվներ		-	191,164.96
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտավորություններ		-	12,140.14
Ընդամենը պարտավորություններ		-	12,140.14
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Աճողական մուտքեր			
ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ	8.1	829,358.07	690,064.48
ՀՀ Կառավարություն	8.2	142,676.12	135,981.84
		972,034.19	826,046.32
Աճողական ծախսումներ			
Ծրագրի ծախսումներ		(965,347.02)	(640,910.33)
		(965,347.02)	(640,910.33)
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(կորուստ)		(6,687.17)	(6,111.17)
Ընդամենը զուտ ակտիվներ		-	179,024.82

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթը	13.01.2017	01.01.2016
			ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	-	155,582.33
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)	Գանձապետարան	ՀՀ դրամ	-	35,582.63
Ընդամենը			-	191,164.96

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

7. Ծրագրային ծախսեր

7.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆունդերի

Ծախսային հոդվածներ	Հաշվետու ժամանակաշրջան			Կուտակային 13.01.2017թ. դրությամբ		
	ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ	ՀՀ Կառավարու- թյուն	Ընդամենը	ԳԷՀ No. TF013724 Դրամաշնորհ	ՀՀ Կառավարու- թյուն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	102,932.61	5,417.50	108,350.11	437,952.48	62,540.53	500,493.01
2. Համայնքային դրամաշնորհներ 1(բ) մասի ներքո	191,943.31	36,412.43	228,355.74	391,405.59	76,274.28	467,679.87
Ընդամենը	294,875.92	41,829.93	336,705.85	829,358.07	138,814.81	968,172.88

7.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ 13 հունվարի 2017թ. դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
1. Խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	500,493.01	582,000.00	86%
2. Համայնքային դրամաշնորհներ 1(բ) մասի ներքո	467,679.87	498,000.00	94%
Ընդամենը	968,172.88	1,080,000.00	90%

8. Ֆինանսավորում

8.1. Դրամաշնորհ ԳԷՀ No. TF013724

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Աճողական առ 13.01.2017 ԱՄՆ դոլար
Կանխավճար / (մարում)	(180,000.00)	0.00
SOE և Summary Report	319,293.59	829,358.07
Ընդամենը	139,293.59	829,358.07
Ընդամենը բյուջե		900,000.00
Առ 13.01.2017 տրամադրված ֆինանսավորում %		92%

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

8.2. ՀՀ Կառավարություն

	Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար	Անողական առ 13.01.2017 ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	6,694.28	142,676.12
Ընդամենը բյուջե Առ 13.01.2017 տրամադրված ֆինանսավորում %		180,000.00 79%

9. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2016թ. դեկտեմբերի 11-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2017թ. հունվարի 13-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ.

- ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր չեն կատարվել, արտոնյալ ժամանակահատվածում վճարումները վերաբերում են մինչև Ավարտման ամսաթիվը կատարված ծախսերին
- բ. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո TF013724 դրամաշնորհի գծով առհանումներ չեն կատարվել,
- գ. Հաշվետու ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,
- դ. Հաշվետու ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առնչվող կանխավճարների և դրամական միջոցների մնացորդներ, չմարված կրեդիտորական պարտավորություններ:
- ե. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

ՀԱՍՏՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ
ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013724

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԳԾԻԳ-ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ
2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 13-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

Ծախսային հոդված	Դիմում	ԳԾԻԳ	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար (մարում)	9		(141,391.29)	
	10		(24,430.97)	
	ես վերադարձ		(589.99)	
	11		(13,587.75)	
			(180,000.00)	
1. Խորհրդատվական ծառայություններ և վերապատրաստում	7	48,312.15	48,312.15	-
	9	79,038.13	79,038.13	-
		127,350.28	127,350.28	
2. Համայնքային դրամաշնորհներ 1(բ) մասի ներքո	8	87,571.43	87,571.43	-
	9	62,353.16	62,353.16	-
	10	28,430.97	28,430.97	-
	11	13,587.75	13,587.75	-
		191,943.31	191,943.31	
		319,293.59	139,293.59	